ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Մհեր Արմենի Ճիրինյանի՝ «Հայաստանի Հանրապետության հավաքական անվտանգային գործակցության հիմնախնդիրները արդի ժամանակաշրջանում» թեմայով ատենախոսության վերաբերյալ:

Ընդհանուր ընկալմամբ՝ հավաքական անվտանգությունը հիմնված է այն գաղափարի վրա, որ անվտանգությունը բխում է բոլոր պետությունների շահերից, և անվտանգության դեմ ուղղված սպառնալիքներին դիմակայելու համար հաճախ պահանջվում է միասնական միջազգային արձագանք: Պետությունները համաձայնում են դիմակայել անվտանգության սպառնալիքներին և կիսել խաղաղության պահպանման կամ դրա պարտադրանքի ծախսերը

Ինչպես համաշխարհային, այնպես էլ տարածաշրջանային մասշտաբով անվտանգության համակարգի ձևավորման ու պահպանման խնդիրը դարձել է ժամանակակից միջազգային հարաբերությունների կենտրոնական պրոբլեմներից մեկը և բազմաթիվ քննարկումների առարկա: Արդի գիտության ասպարեզում մշակվել է անվտանգության խնդիրների մասին բավականին զարգացած համակարգ: Այդուհանդերձ, այսօր հիմնական խնդիրների վերաբերյալ աշխարհայացքների խոր փոխակերպումները ակներև կերպով վկայում են, որ դիտարկելի է մի շարք ավանդական դրույթների վերանայման անհրաժեշտություն:

Միջպետական հարաբերությունների կառուցվածքը հիմնովին փոխելու, ռազմական բռնությամբ ուժերի և շահերի ձևռնտու հաշվեկշիռ հաստատելու նպատակով լայնածավալ ցինված միջբլոկային հակամարտության սպառնալիքը փոխարինվում է այլ բնույթի խնդիրներով և մարտահրավերներով, որոնք շատ ավելի բազմագան են, պակաս ակնհայտ և կանխատեսելի, քան նախկինում:

Այս համատեքստում հարկ է փաստել, որ հրապարակային պաշտպանության ներկայացված աշխատանքը՝ նվիրված Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության համատեքստում հավաքական գործակցության ձևաչափի ուսումնասիրությանը, արդիական է, քանի որ հաջողված փորձ է ՀՀ անվտանգային ու ռազմաքաղաքական զարգացումների համատեքստում ներկայացնել բազմակողմ համագործակցության հիմնատարրեր, դրանց վերաբերյալ տեսական ու կիրառական հիմնախնդիրները, գիտականորեն հիմնավորել որոշ ամփոփումներ և եզրահանգումներ:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ձևակերպված է գիտական նորույթը, տրված են հիմնական նպատակներն ու խնդիրները, ուսումնասիրության մեթոդաբանությունը և թեմայի մշակվածության աստիճանը, ինչպես նաև վերլուծված է նրա տեսական և գործնական նշանակությունը:

Առաջին գլուխը վերնագրված է «**Հավաքական անվտանգության գործակցությունը միջազգային բազմակողմ հարաբերությունների համատեքստում**» և ներառում է երկու ենթագլուխ: Այս գլխում հեղինակը արդարացիորեն ընդգծում է, որ հավաքական անվտանգության մակարդակը, բացի միասնական պաշտպանության կառուցակարգից, մեծապես կախված է նաև լիբերալ ժողովրդավարությունից, այն է՝ հավաքական անվտանգության ոլորտում միասնությանը հաջորդում է ուժեղ տնտեսական համագործակցությունը տարածաշրջանի ներսում, օրենքի գերակայության մասով համատեղ ընկալումները և այլ կարևոր բաղադրիչներ: Այս գլխում Մ. Ճիրինյանը կարևորում

է, այն, որ հավաքական գործակցության կողմերից յուրաքանչյուրը դրսևորում է իր ուժային դիրքի ամրապնդման հիմնական եղանակներ՝ սեփական ուժի արագացված զարգացում, սեփական ուժի ավելացում՝ դրան ավելացնելով այլ երկրների հզորությունը, և հավանական հակառակորդի հզորության թուլացում՝ խոչընդոտելով նրա հետ երրորդ երկրների միավորմանը:

Ատենախոսության երկրորդ՝ «**Հավաքական անվտանգության մոդելի սկզբնավորումը և հետագա զարգացումները Ազգերի լիգայի ու Միավորված ազգերի կազմակերպության ձևաչափում**» գլխում նշվում է, որ հավաքական անվտանգության առաջին ժամանակակից կազմակերպություն ստեղծելու փորձի մարմնավորումն է Ազգերի լիգան, որը կազմավորվել էր առաջին համաշխարհային պատերազմից հետո: Հետագայում արդեն ՄԱԿ-ի Կանոնադրությունը տարբերում է կոլեկտիվ անվտանգության ապահովման մի քանի հիմնական մեխանիզմներ՝ վեճերի խաղաղ կարգավորում (գլուխ VI), գործողություններ խաղաղության վտանգման, խաղաղության խախտման և ագրեսիայի առնչությամբ (գլուխ VII) և տարածաշրջանային համաձայնություններ (գլուխ VIII): Հավաքական անվտանգությունը, սկզբում ձևավորվելով որպես զուտ ռազմամարտավարական միջոցառումների համախումբ, թևակոխեց տեսական ու գործնական զարգացում, և նմանատիպ կազմակերպությունները բավական արագ վերածվեցին համախոհ պետությունների տարածաշրջանային պաշտպանական–անվտանգային կազմակերպությունների:

Երրորդ՝ «**Հայաստանի Հանրապետության ինտեգրվածությունը հավաքական անվտանգային գործակցության արդի կառուցակարգերին**» վերտառությամբ գլխում վերլուծվում են Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության բազմակողմ ձևաչափում գործակցության կոնկրետ ուղղությունները, ինչպես նաև հետազոտվում է անվտանգության տվյալ հիմնախնդրի շրջանակներում խաղաղապահ առաքելություններին Հայաստանի մասնակցության նպատակայնությունը:

Մեր Շիրինյանի կողմից պաշտպանության ներկայացված ատենախոսությունը, սակայն, զերծ չէ, նաև որոշակի բացերից: Մասնավորապես.

1. Ատենախոսության մեջ «հավաքական անվտանգություն» և «հավաքական պաշտպանություն» հասկացությունները կիրառվում են հաճախ փոխարինելիորեն՝ առանց դրանց բովանդակային և գործառնական տարբերությունների համակարգված բացահայտման (ներածություն, գլուխ 1.1): Մինչդեռ քաղաքական գիտության և անվտանգության ուսումնասիրությունների դասական և ժամանակակից գրականության մեջ այս երկու կատեգորիաները տարբերվում են ինչպես իրենց նպատակադրությամբ, այնպես էլ ինստիտուցիոնալ տրամաբանությամբ: Հասկացությունների նման խառն կիրառումը հանգեցնում է տեսական շրջանակի որոշակի ապակոնցեպտուալացման, աշխատանքում միաժամանակ օգտագործվում են տարբեր վերլուծական մակարդակներ՝ առանց դրանց հստակ տարանջատման: Արդյունքում առաջանում է մեթոդաբանական որոշակի անորոշություն:
2. Ատենախոսության տեսական հատվածներում նկատվում է նորմատիվ մոտեցման գերակշռություն, ներկայացվում է, թե ինչպես պետք է գործի հավաքական անվտանգությունը՝ որպես իդեալական համակարգ, սակայն համեմատաբար քիչ ուշադրություն է դարձվում դրա իրական գործառնական սահմանափակումներին (գլուխ 1.1): Մասնավորապես, բավարար խորությամբ չեն ուսումնասիրվում այնպիսի հիմնարար կառուցակարգային խնդիրներ, ինչպիսիք են ուժերի անհավասար բաշխման պայմաններում հեգեմոնի դերակատարությունը, անդամ պետությունների շահերի անհամադրելիությունը՝ որպես համակարգի արդյունավետության

սահմանափակում: Այս հանգամանքը բերում է նրան, որ տեսական վերլուծությունը երբեմն մնում է դեկլարատիվ մակարդակում և չի վերածվում պատճառահետևանքային խորքային բացատրության:

3. Ատենախոսության մեջ բազմիցս շեշտվում է Հայաստանի Հանրապետության համար «բալանսավորված» կամ «բազմավեկտոր» արտաքին քաղաքականության անհրաժեշտությունը (գիտական նորույթ, կետ 7), սակայն այդ մոտեցումը չի ստանում բավարար տեսական հիմնավորում: Չի իրականացվում դրա համակարգային մոդելավորում, չեն հստակեցվում այն պայմանները, որոնց դեպքում բազմավեկտորությունը կարող է լինել արդյունավետ, չի բացահայտվում դրա կիրառելիության սահմանը փոքր պետությունների համար, չի բնութագրվում այն վտանգը, որ բազմավեկտորությունը կարող է վերածվել ռազմավարական անորոշության կամ արտաքին կախվածությունների բազմապատկման: Արդյունքում տվյալ հայեցակարգը ներկայացվում է ավելի շատ որպես քաղաքական թեզ, քան գիտականորեն կառուցված և օպերացիոնալիզացված վերլուծական գործիք:
4. «Ատենախոսության գիտական նորույթ» բաժնի նույն 7-րդ կետում կարդում ենք. *"Այս համատեքստում կարևորվում է 2026 թվականի ընտրություններից հետո սպասվող սահմանադրական բարեփոխումներում անվտանգային հավաքական ձևաչափի արդյունավետ կուրսի ընտրությունն ու զարգացումը"*: Հարկ է հիշեցնել, որ սահմանադրական բարեփոխումները ՀՀ գործող իշխանությունների պաշտոնական օրակարգի մաս են կազմում: Ու թեև ՀՀ խորհրդարանական ընտրությունները տեղի են ունենալու 2026 թ. հունիսի 7-ին՝ ատենախոսության հրապարակային պաշտպանությունից ուղիղ մեկ ամիս անց, ատենախոսն առանց երկմտելու փաստացի խոսում է դրանց արդյունքների մասին՝ ոչ թե որպես հնարավոր սցենար, այլև անխուսափելի իրողություն: Նման մոտեցումն առավելապես քաղաքական բնույթ է կրում:
5. Չնայած ատենախոսության մեջ օգտագործված գրականության ծավալը տպավորիչ է (168 աղբյուր), դրանց որակական և կառուցվածքային վերլուծությունը ցույց է տալիս, որ աղբյուրագիտական բազայում առկա է որոշակի անհավասարակշռություն: Մասնավորապես, նկատվում է ռուսաստանյան և մասամբ պաշտոնական-դոկտրինալ աղբյուրների հարաբերական գերակշռություն, արևմտյան ժամանակակից տեսական դպրոցների (նեոռեալիզմ, նեոլիբերալ ինստիտուցիոնալիզմ, անվտանգության քննադատական ուսումնասիրություններ, նեոֆունկցիոնալիզմ, պոստպոզիտիվիզմ) սահմանափակ ներգրավվածություն, առաջնային աղբյուրների (policy papers, ռազմավարական փաստաթղթեր, think tank-երի վերլուծություններ) ոչ համակարգված օգտագործում: Միաժամանակ, ցանկալի կլիներ տարանջատել գիտական հրապարակումներն ու մամուլում տեղ գտած նյութերը, որոնք ատենախոսը ներկայացնում է ընդհանուր ցուցակով:

Վերոհիշյալ նկատառումները կհարստացնեին ատենախոսությունը՝ հնարավորություն տալով հեղինակին առավել խորը բացահայտելու Հայաստանի Հանրապետության հավաքական անվտանգության քաղաքականության բազմաշերտությունը և դրա երաշխավորման ու զարգացման հնարավորությունների ամբողջությունը:

Այդուհանդերձ, Միհր Շիրինյանն իր առջև դրված խնդիրներն ու նպատակները կատարել է լիովին: Ատենախոսությունում առկա եզրակացություններն ու ամփոփումներն ունեն տեսական և գործնական նշանակություն: Հետազոտությունն աչքի է ընկնում գիտական

հիմնախնդիրների շարադրման հետևողականությամբ և տրամաբանական հաջորդականությամբ: Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և հանդիսանում է նրա հիմնական դրույթների նույնական արտացոլումը: Ատենախոսի կողմից հրապարակված թվով վեց գիտական հոդվածներում արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները:

Վերոգրյալի հիման վրա, ինչպես նաև հաշվի առնելով թեմայի արդիականությունն ու բարձրացված հիմնախնդիրների վերաբերյալ կատարված ծավալուն աշխատանքները և վերջնարդյունք եզրահանգումները՝ գտնում եմ, որ **Միեր Արմոյի Շիրինյանի՝ «Հայաստանի Հանրապետության հավաքական անվտանգային գործակցության հիմնախնդիրները արդի ժամանակաշրջանում» թեմայով ատենախոսությունը լիովին բավարարում է նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին,** իսկ հեղինակն էլ արժանի է հայցվող մասնագիտությամբ բաղաբական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Ռուս-հայկական համալսարանի Կ.Ա. Միրումյանի անվան
Քաղաքագիտության ամբիոնի պրոֆեսոր, քաղաքական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վահե Սամվելի Դավթյան

Պաշտոնական ընդդիմախոսի (պրոֆեսոր Վահե Դավթյանի) ստորագրության իսկությունը հաստատում եմ՝

Ռուս-հայկականն համալսարանի գիտական քարտուղար,
բանասիրական գիտությունների թեկնածու Ռ. Կասաբաբովա

_____ _____
(կազմակերպության գիտ. քարտուղար) *(ստորագրություն և կնիք)*

_____ 2026թ.